

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԳԻՐԳԻ ԳԱՆԱՐԻԱ. «ՄԱՅՔ ՊՈՄՊԵՈՅԻ ԱՅՅԸ ԸՆԴՊԾԵՑ ԻԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՀԱՄԱՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

Նոյեմբերի 17-ին, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քարտուղար Մայք Պոմպեոն: Այցի շրջանակներում ԱՄՆ պետքարտուղարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիանի, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ: Մայք Պոմպեոն հանդիպեց նաև ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:



Մայք Պոմպեոյի հետ:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, ԱՄՆ-ի պետական քարտուղարի հետ կայացել է արդյունավետ հանդիպում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԲԵՔ ԶԵՆ ԵՂԵԼ ԱՅՅՔԱՆ ԴԻՆԱՄԻԿ

Նոյեմբերի 18-ին, Վրաստանի կառավարության նստավայրում, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող ԱՄՆ պետքարտուղար

ՄԱՅՔ ՊՈՄՊԵՈ. «ՀԱՃԵԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾՐԲԵԼԻԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ, ՈՐՏԵՂ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ»



Ինչպես նշվեց Վրաստանում ԱՄՆ դեսպանության տարածած

Նոյեմբերի 18-ին, Թբիլիսիում, Վրաստանի նախագահի նստավայրում, Օրբելիանների պալատում կայացավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու հանդիպումը ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի հետ:

հաղորդագրության մեջ. «Պետքարտուղար Պոմպեոյին հաճելի էր նախագահ Ջուրաբիշվիլուն հանդիպել Օրբելիանների պատմական պալատում, որտեղ նախկին

ը պետական քարտուղարը Միացյալ Նահանգների անունից հավատարմություն հայտնեց Վրաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության նկատմամբ եւ երկրի հանդեպ հարգանք դրսևորեց գլոբալ ահաբեկչության դեմ պայքարում ունեցած զգալի ներդրման համար»:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽ

ՔՈ ԶԱՅՆԸ՝ ՔՈ ԸՆՏՐՅԱԼԻՆ

ԱՅՍՕՐ ԵՐԿՐԻ 16 ԸՆՏՐԱՍԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ, ԱՅՐ ԹՎՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԵԼ ՍԵՃԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր՝ նոյեմբերի 21-ին, Վրաստանի 30 ընտրատարածքներից 16-ում անց են կացվում խորհրդարանական ընտրություններ՝ մեծամասնական ընտրահամակարգով ընտրողներն ընտրություն են կատարելու հոկտեմբերի 31-ի ընտրությունների արդյունքներով այդ ընտրատարածքներում ձայների քանակով առաջին երկու տեղերը զբաղեցրած մեծամասնական թեկնածուների միջև:

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով համամասնական ընտրահամակարգով մեկ տոկոսի ընտրաշեմը հաղթահարեցին «Վրացական երազանքը» (48,15 տոկոս, 61 մանդատ), «Ազգային շարժում-Միացյալ ընդդիմությունը» (27,14 տոկոս, 35 մանդատ), «Եվրոպական Վրաստանը» (3,78 տոկոս, 5 մանդատ), «Լեյոն» (3,15 տոկոս, 4 մանդատ), «Հայրենասերների այլանը» (3,14 տոկոս, 4 մանդատ), «Ռազմավարությունը՝ շինարար» (3,15 տոկոս, 4 մանդատ), «Գիրչին» (2,89 տոկոս, 4 մանդատ), «Ալեկո Էլիսաշվիլի-քաղաքացիները» (1,33 տոկոս, 2 մանդատ), «Լեյբորիստական կուսակցությունը» (1 տոկոս, 1 մանդատ): Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրահամակարգով ընտրություններին, ապա 30 ընտրատարածքներից հաղթողը

բացահայտվեց 14 ընտրատարածքներում (ընդ որում այդ բոլոր ընտրատարածքներում հաղթեցին «Երազանքի» ներկայացուցիչները), իսկ մնացած 16-ում ընտրությունների երկրորդ փուլը կանցկացվի այսօր՝ նոյեմբերի 21-ին: Նշենք, որ Միացյալ ընդդիմությունը հրաժարվել է խորհրդարանական մանդատներից եւ մտադիր չէ մասնակցելու ընտրությունների երկրորդ փուլին:

Նշենք, որ խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլում անց է կացվում Թբիլիսիի բոլոր ութ ընտրատարածքներում, ինչպես նաև՝ Թելավիի, Ախմետայի, Դվարեկիի եւ Լազոդեփիի, Ռուսթավիի, Խաշուրիի եւ Քարելիի, Քուբայիսիի, Բաթումիի, Ջուգոփիի, Տղիբուլիի, Թերջոլայի, Ջեստափոնիի եւ Բաղդադիի, Քեդիի, Շուախեթիի եւ Խուլուլի ընտրատարածքներում:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԵՄ ԵՄ ԱՅՆ ԹԻՎ ՄԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆ, ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ»

Արցախի վերջին իրադարձությունների հետ կապված, առցանց ասուլիսի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ պատասխանատվությունը համարում է իրենը, սակայն դա լիարժեք կրելու համար կարելու է հանրության համար բոլոր հանգամանքների պարզաբանումը:

- Որեւէ կասկած չկա, ես եմ այն թիվ մեկ պաշտոնյան, որ տեղի ունեցածի համար կրում է պատասխանատվություն: Հաշիվ եմ տալիս, որ այս փաստի բերումով, միգուցե սուր է ձեւակերպումը, բայց կկանգնեմ մեր ժողովրդի դատի առաջ, սակայն տվյալ դեպքում ժողովրդը պետք է կարողանա եզրահանգումներ

րի գալ, պետք է տիրապետի գործի բոլոր հանգամանքներին: Հենց նույն զինվորներին, ընդդիմությանը, կառավարությանը լսելն այդ պրոցեսի անբաժանելի մասն է: Կարելու է համարում այն, որ հասկանալի լինի, թե ինչ է տեղի ունեցել, ասել է Նիկոլ Փաշինյանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

COVID - 19

ՔԱՅԼԵՐ՝ ՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԳԵՐԲԵՌՆԱԿԱԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վարչապետ Գիորգի Գախարիան, առողջապահական ոլորտի փորձագետների հետ, քննարկել է Վրաստանում ստեղծված համավարակաբանական իրավիճակը եւ «Կովիդ 19»-ի կառավարման գործընթացում գոյություն ունեցող մարտահրավերները:

Կառավարության ղեկավարը մանրամասն լսել է համավարակի վերաբերյալ ոլորտի փորձագետների դիրքորոշումները: Ուշադրության կենտրոնում էր



հոսպիտալային հատվածի պատասխանատվությունը: Զրույցի ընթացքում ուշադրությունը կենտրոնացվել է նրա վրա, թե ինչ քայլեր կարելի է ձեռնարկել հոսպիտալային հատվածում գերբեռն-

վածությունից խուսափելու համար, որպեսզի հիվանդանոցից դուրս չմնան այն մարդիկ, ովքեր, առաջին հերթին, ունեն հատուկ բուժման կարիք:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

«ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱ, ՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ՆԱԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, անդրադառնալով նոյեմբերի 21-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի մասնակցությունից, ինչպես նաև հոկտեմբերի 31-ին անցկացված ընտրությունների արդյունքներով իրենց հասանելի մանդատներից հրաժարվելու ընդդիմադիր ութ կուսակցությունների որոշմանը, հայտարարեց, որ ընտրողների աջակցությունը նախատեսում է պատասխանատվություն:

Գիորգի Գախարիայի հայտարարությանը՝ Վրաստանի քաղաքացիները, ովքեր համավարակի պայմաններում մասնակցեցին ընտրություններին, հոկտեմբերի 31-ին աջակցեցին ինը կուսակցությունների, նրանց ներկայությանը խորհրդարանում, նրան, որ քաղաքական կուսակցություններն իրենց շնորհված պատաս-

խանատվության տեսանկյունից միասին հոգան երկրում առկա մարտահրավերների լուծումը:

Նրա խոսքով, ինքը վստահ է, որ յուրաքանչյուր քաղաքական միություն, յուրաքանչյուր պատգամավոր հասկանում է այդ պատասխանատվությունը եւ գործելու է ըստ այդմ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ՝ ՈՒՂՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՎՄԱՆ ՈՒ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Վրաստանի կառավարության որոշմամբ, «Արտադրիչի Վրաստանում» ծրագրի շրջանակներում, սկսվում է նոր նախագիծ, որը կնպաստի օտարերկրյա ներդրումների գրավմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

«Օտարերկրյա ներդրումային նախագծերի աջակցության մեխանիզմ» նոր ծրագիրը նախատեսում է շուրջ 1 միլիոն Լարիի համաֆինանսավորման առաջարկ օտարերկրյա կապիտալ հիմնով ընկերություններին, որոնք ցանկանում են մուտք գործել Վրաստան, հիմնել նոր արտադրություններ կամ ընդլայնել գործող արտադրությունները, մտադիր են ստանձնել առնվազն 10 միլիոն Լարիի ներդրում կատարելու և առնվազն 150 մարդու աշխատանքով ապահովելու պարտավորություն:

Նոր նախագծի գլխավոր նպատակը աշխատատեղերի ստեղծումն է և արդեն աշխատող կադրերի վերապատրաստումն ու նախապատրաստումը:

Համաֆինանսավորման վերոնշյալ առաջարկությունը տարածվում է այնպիսի ոլորտների վրա, որոնք առնչվում են վերամշակման ինդուստրիային, որտեղ հնարավոր է ստեղծել բոլորից շատ աշխատատեղեր, էլեկտրոնիկայի, էլեկտրոնային ինժեներիայի արտադրանքին, տրանսպորտային միջոցներին և դրանց պահեստամասերի արտադրությանը, մեքենաշինությանը և այլն:



ՄԱՅՈՒ ՁԲԻՏԻՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԿԿՏԻՎՈՐԵՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՒՄ Է ԻՐ ՀԱՎԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ»



Նոյեմբերի 18-ին Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարար Մայա Ձբիտիշվիլին, Ալոկենիայի, Պորտուգալիայի և Հարավային Աֆրիկայի կառավարությունների ներկայացուցիչների հետ միասին, մասնակցեց տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) հովանու ներքո անցկացված վիրտուալ ձեռնարկային համաժողովին, որտեղ քննարկվեցին գլոբալ համավարակի մարտահրավերի դիմակայմանն առնչվող հարցեր:

Նվազ կորուստներով: Աշխարհի մյուս երկրների օրինակով, Վրաստանում համավարակի երկրորդ ալիքն է, որն, ի տարբերություն առաջինի, անհամեմատ ավելի հզոր է: Հնայած բարդություններին, Մայա Ձբիտիշվիլու խոսքով, միջգերատեսչական համակարգող խորհրդի գործունեության արդյունքում, միջազգային գործընկերների օգնությամբ, երկիրը կարողանում է վերահսկողության տակ պահել COVID-19-ի տարածումն ու նվազեցնել տնտեսական կորուստները: Փոխվարչապետի խոսքով, կառավարությունն ակտիվ աշխատում է իր հակաճգնաժամային ծրագրի ուղղությամբ, ինչը նպաստում է, ընթացիկ և առաջիկա մարտահրավերների հաշվարկմամբ, երկրի առաջատար ոլորտների կայունության ապահովմանը:

Ինչպես իր խոսքում նշեց Վրաստանի փոխվարչապետը, երկրի կառավարության գործադրած ջանքերի շնորհիվ, Վրաստանում կորոնավիրուսի առաջին ալիքը, համեմատաբար, հաղթահարվեց

ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱՐԱՆՄԱՆ ԾԱՎԱՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Նոյեմբերի 20-ին, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան անցկացրեց մամլո ասուլիս, որտեղ մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում տեղական ապրանքների արտահանման գործում առկա դրական միտումների մասին:

Նրա խոսքով, չնայած կորոնավիրուսի համավարակի և գլոբալ տնտեսական ճգնաժամի, հաջողությամբ առաջ է տանում Վրաստանի տնտեսական առողջացման գործընթացը: Մասնավորապես, վավերացվել է տեղական ապրանքների արտահանման ծավալների աճ: 2020 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով, այն կազմել է 72,1 տոկոս: Հոկտեմբերին Վրաստանում թողարկած արտահանվող արտադրանքը, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ, ավելացել է 21,2 տոկոսով: Վրաստանից արտահանվող ապրանքները, ենթակառուցային նախագծերի հետ միասին, ներկայացնում են այն շարժիչ ուժը, որը աստիճանաբար հիմնում է երկրի տնտեսական առողջացման դիմանալիկը: Վրաստանից արտահանվող ապրանքները, ենթակառուցային նախագծերի հետ միասին, ներկայացնում են այն շարժիչ ուժը, որը աստիճանաբար հիմնում է երկրի տնտեսական առողջացման դիմանալիկը: Վրաստանից արտահանվող ապրանքները, ենթակառուցային նախագծերի հետ միասին, ներկայացնում են այն շարժիչ ուժը, որը աստիճանաբար հիմնում է երկրի տնտեսական առողջացման դիմանալիկը:



հայտարարեց Նաթիա Թուրնավան:

ՎԱՐԿԱՆԻՇ

ԳԼՈՒԲԱԼ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԿԵԼ ԵՆ

Վրաստանը բարելավել է իր վարկանիշային միավորը համաշխարհային բարեկեցության ինդեքսում և այդպիսով հասել պատմական առավելագույնին:

Վրաստանի կառավարության վարչակազմի տվյալներով, Վրաստանը ստացել է 100 տոկոս վարկանիշային սանդղակից 61,8 տոկոսը: Համաշխարհային բարեկեցության վարկանիշում Վրաստանը առաջ է անցել բոլոր հարևան երկրներից, ինչպես նաև հետխորհրդային բոլոր երկրներից, բացառությամբ՝ Մերձբալթյան երկրների:


«Legatum Institute» կազմակերպությունը գլոբալ բարեկեցությունը գնահատում է ըստ 12 ազդեցատի. Պաշտպանվածություն և անվտանգություն, անձնական ազատություն, կառավարում (կառավարության արդյունավետություն), սոցիալական կապիտալ, ներդրումային միջավայր, ձեռնարկատիրական պայմաններ, շուկայի հասանելիություն և ենթակառուցվածք, էկոնոմիկայի որակ, կյանքի պայմաններ, առողջություն, կրթություն, բնական միջավայր (էկոլոգիա):

ԴԻՄԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԱՐԽԱՉԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀԱՐՅՈՒՆ

Նոյեմբերի 17-ին անցկացված մամլո ասուլիսում, Աբխազիայի ինքնառաջարկ հանրապետության նախագահ Ասլան Բժանիան հայտարարեց, որ հանդիպում է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ և, գրեթե երկամսյա խոսակցության ընթացքում, քննարկվել են երկկողմ հարաբերությունների կորոնավիրուսի դեմ պայքարի արժանազան երկաթուղու վերագործարկման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների վարչության տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակին առնչվող հարցեր:

Իրադարձությունների բարենպաստ ձեւավորման դեպքում, հնարավոր է երկաթուղու գործարկումը: Մոտ ժամանակներում իրավիճակն է՛լ ավելի կիստակեցվի, ուստի, կարծում եմ, այդ հարցին կվերադառնանք մի փոքր ավելի ուշ, ելնելով նրանից, թե ինչպես կզարգանան իրադարձությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ, հայտարարեց Ասլան Բժանիան:



ԱՄՆ ԹՐԱՄԻ ԲՈՂՈՔԻ ՀԱՅՅԸ ՄԵՐԺՎԵԼ Է, ԲԱՅՈՒՆԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, նոյեմբերի 3-ին ԱՄՆ-ում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Նախնական տվյալներով, ընտրություններում հաղթել է դեմոկրատների թեկնածու Ջո Բայդենը, թեպետ Դոնալդ Թրամփը բողոքարկում է և հայտարարում, որ ընտրությունները կեղծվել են:

Նա Ֆիլադելֆիայում և Փիթսբուրգում տրված ավելի քան 600 հազար ձայնը անվավեր ճանաչվելու մասին բողոքի հայց էր ներկայացրել Փենսիլվանիայի գերագույն դատարանին, թեպետ այն մերժվել է: 20 քվեատու ունեցող Փենսիլվանիան այն հանգուցային նահանգներից մեկն է, որը կարող է որոշել ԱՄՆ-ի նախագահի ընտրությունների ելքը, քանի դեռ այնտեղ հաղթողին չեն հայտարարել:

Մերժվեց նաև Թրամփի հայցը Ջորջիայի դատարանում: Ամերիկայի առաջատար հեռուստաալիքները կայտարարել են Դեմոկրատական կուսակցությունից թեկնածու Ջո Բայդենի հաղթանակի մասին: Համաշխարհային բազմաթիվ առաջնորդներ արդեն շնորհավորել են նրան:

ՍՈՒՂՎԱԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑ ԸՆԴՈՒՆՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՄ

Չայների 99 տոկոս հաշվարկից հետո, Սուղդվայի նախագահական ընտրություններում հաղթում է ընդդիմադիր Մայա Սանդուի:

Ըստ Սուղդվայի կենտրոնական ընտրական հանձնաժողովի, եվրոպամետ ընդդիմադիր կուսակցության առաջնորդն ունի ձայների 57,42 տոկոսը, իսկ գործող նախագահ Իգոր Դոդոնը՝ 42,58 տոկոսը:

Վերջին տվյալների համաձայն, Մայա Սանդուի օգտին քվեարկել է Սուղդվայի ավելի քան 910 000 քաղաքացի, իսկ Իգոր Դոդոնի օգտին՝ ավելի քան 689 000 մարդ:

ԲԵԼԱՌՈՒՍ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐ՝ ԵՐԿՐԻ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Արդեն չորրորդ ամիսն է, ինչ Բելառուսի քաղաքներում անց են կացվում բողոքի ցույցեր: Դրանք սկսվեցին օգոստոսի 9-ի նախագահական ընտրություններից հետո, երբ ԿԸՀ-ն հայտնեց, որ գործող նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հավաքել է ձայների 80,1 տոկոսը: Ընդդիմությունն այդ արդյունքները չի ընդունում:

Նոյեմբերի 15-ին Մինսկում ընդդիմության ներկայացուցիչներն անցկացրին ակցիա, ակցիաներից մեկի ժամանակ զոհված Ալեքսանդր Տարախովսկու հիշատակին նվիրված հուշաքարի տեղադրմանը: Բողոքավորների շարքերում իրականացվել են ձեռքարկություններ:

ՖԻՆԼԱՆԴԻԱ ՓՈՎԿԵՑ ՈՒՄԱԼԵՋՈՒ ՎԵՐՋԻՆ ԹԵՐԹԸ

«Սպեկտր» ռուսալեզու թերթը, որը Ֆինլանդիայում հրատարակվում է 1997 թվականից, ֆինանսական դժվարությունների պատճառով, փակվեց:

Թերթը միակ ռուսալեզու թերթն է մնացել, որը կանոնավոր կերպով հրատարակվում է Ֆինլանդիայում: Այն ամբողջ Ֆինլանդիայում տարածվել է բաժանորդագրությամբ, ինչպես նաև անվճար՝ մայրաքաղաքում և Արեւելյան Ֆինլանդիայում, որը սահմանակից է Ռուսաստանին:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ


ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ ԱԿՏՈՄԱՏՈՐԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Ե 33 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

Էկոնոմիկայի խրախուսման, ինչպես նաև գործարարությանը եւ քաղաքացիներին աջակցելու նպատակով, ընթացիկ տարվա հոկտեմբերի հայտագրերի համաձայն, 9238 հարկատուներին պատկանող հավելյալ արժեքի հարկի (ՀԱՀ) ավելցուկ գումարն ավտոմատորեն, առանց վերադարձման հայտագրի, վերադարձվում է հարկատուներին: Վերադարձած գումարի ընդհանուր չափը կազմել է 73 միլիոն լարի:



տոմատ կերպով:

Հետեւաբար, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը եւս մեկ անգամ հարկատուներին կոչ է անում ժամանակին ապահովել վերոնշյալ տեղեկատվության տրամադրումը: Ինչ վերաբերում է մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 16-ը, հայտագրված ավելցուկով մուծված գումարներին, որոնք ներկայացված են հարկատուի անձնական հաշվառման քարտի վրա, ապա անձը վերոնշյալ գումարը կարող է վերադարձնել «Հարկատուի պահանջ» ներկայացման հիման վրա կամ դիմի հարկային պարտքի մարման նպատակով:

ՀԱՀ-ի ավելցուկ գումարի արագ, դյուրին եւ առանց արգելքների վերադարձումն առանձնակի նշանակալի կլինի փոքր եւ միջին գործարարության աջակցության եւ աշխատատեղերի պահպանման համար:

ՎՐԱՍԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ԶԿԱՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Թբիլիսի-2» տնտեսական ձեւակերպման գոտում բացահայտվել է իրավախախտման փաստ: Մասնավորապես, մաքսային աշխատակիցները ռիսկի գնահատման եւ վերլուծության հիման վրա, ընկերություններից մեկի կողմից ներկրած բեռը ստուգման են ենթարկել վերահսկողության կարմիր միջանցքում: Վերոնշյալ բեռի խցիկային եւ ֆիզիկական ստուգման արդյունքում, հայտնաբերվել է 10192 լարիի արժողության չհայտագրված ապրանք (հագուստեղեն): Վրաստանի մաքսային օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի համաձայն, օրինախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է 10192 լարիով:



ՎԱՐԱԿՎԱԾ ԿԱՐՏՈՖԻԼԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Ե ԹՈՒՐՔԻԱՅԻՆ



Վրաստանը ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը տեղեկացնում է, որ «Սարփի» սահմանային անցակետի անցմամբ, Թուրքիայի Հանրապետությունից բեռնատարներով Վրաստան է ներկրվել 23450 կիլոգրամ կարտոֆիլ: Մաքսային դեպարտամենտի սանիտարական, ֆիտոսանիտարական եւ անասնաբուժական վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից, ֆիտոսանիտարական ընթացակարգերի իրականացման ժամանակ, ուսումնասիրություններով հաստատվել է կարտոֆիլի քաղցկեղ (Synchytrium endobioticum):

Վրաստանի կառավարության թիվ 463 որոշման համաձայն, վերոնշյալ ապրանքը ենթակա է արտահանող երկրի տարածք վերադարձման:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԻ ԾԽԱՒՈՏԵՂԵՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի Սամեգրելոյի, Գուրիայի եւ Ջեմո Սվանեթի վարչության աշխատակիցների կողմից անցկացված հսկիչ միջոցառումների արդյունքում, հայտնաբերվել է 750 տուփ (15 հազար գլանակ) առանց ակցիզի սիգարետ: Իրավախախտում թույլ տված քաղաքացու ապրանքն առգրավվել է, գործի նյութերը փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը՝ արձագանքման համար:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԿԱՅԱՑԱԿ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՐՏՈՒՄԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ




Նոյեմբերի 19-ին, Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանի եւ Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն վիրտուալ ձեւաչափով հանդիպել են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) նոր գործադիր տնօրեն Փոլ Հիլբերտի հետ:

Վիրտուալ հանդիպմանը կողմերը քննարկեցին հիմնադրամի գնահատման առաքելության հետ համաձայնեցված խնդիրները «Ֆինանսավորման մեխա-

յին քաղաքականությունը: Վրաստանի ֆինանսների նախարարն ու Ազգային բանկի ղեկավարը շնորհակալություն հայտնեցին Արժույթի միջազ-

գային հիմնադրամի գործադիր տնօրենին ԱՄՀ-ի կողմից Վրաստանին ցուցաբերած աջակցության համար, եւ հաջողություն մաղթեցին հիմնադրամի գործադիր տնօրենին՝ պաշտոնավարման ընթացքում:

Փոլ Հիլբերտի խոսքով, առաքելության մակարդակում ձեռքբերված համաձայնությունը կվերաճի ԱՄՀ ղեկավարության եւ գործադիր խորհրդի կողմից ղեկտեմբերին, իսկ հաստատումից հետո՝ Վրաստանին լրացուցիչ 112,1 միլիոն դոլար կհատկացվի:



ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ԱՃԵԼ Ե

Վրաստանի արտաքին պետական պարտքը շարունակում է աճել: 2020 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ, Վրաստանի արտաքին պարտքը կազմում է 6,991 մլրդ դոլար, ավելի քան 22,600 մլրդ լարի:

Նախորդ ամսվա համեմատ՝ այս ցուցանիշն ավելի է 230 մլն դոլարով: 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ, Վրաստանի պետական արտաքին պարտքը կազմում էր 6,761 մլրդ դոլար:

6,991 մլրդ դոլարից կառավարության արտաքին պարտքը կազմում է 6,737 մլրդ դոլար, իսկ Ազգային բանկի պարտքը՝ 254,095 մլն դոլար:

ԱՎԵԼԱՆՈՒՄ Ե ՆԱԿ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԱԿԸ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրության ազգային գործակալությունը, 2020 թվականի երրորդ եռամսյակում Վրաստանում գործազրկության մակարդակն աճել է 0,7 տոկոսային կետով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, եւ կազմել 11,9 տոկոս, - այս մասին ասվում է վիճակագրական տվյալներում:

Գերատեսչության տվյալներով, 2020 թվականի երրորդ եռամսյակում տնտեսական ակտիվության մակարդակը՝ ինչպես քաղաքային, այնպես էլ՝ գյուղական բնակավայրերում, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, համապատասխանաբար, 0,8 եւ 3 տոկոսային կետով նվազել է:

Չբաղվածության մակարդակը ամբողջ երկրում նվազել է 1,9 տոկոսային կետով, այդ թվում՝ քաղաքային տիպի բնակավայրերում՝ 1,8 տոկոսային, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2,3 տոկոսային կետերով:

ՆՈՐՈՒՅՑ

«ՖԻՆԿԱ» ԲԱՆԿՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱԿՑԻԱՆ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե

«Ֆինկա» բանկը իր հավատարիմ սպառողներին, նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին, կրկին առաջարկում է լավագույն եւ մատչելի հնարավորություններ դրամական փոխանցումների գործառնություն: Մասնավորապես, նրանք կարող են գումարները փոխանցել կամ ստանալ առանց հերթերի ու սպասումների, եւ առանց ավելորդ ժամանակի կորստի, օգտվել տարադրամի փոխանակման հատուկ կուրսից եւ պարզեւտարվել տարբեր դրամական մրցանակներով:

Ակցիայի պայմաններն ավելի քան դյուրին են: Նոյեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն ամիս «Ֆինկա» բանկն իր 36 սերվիս-կենտրոններում կհայտնաբերի ամենակատիվ 36 սպառողներին եւ յուրաքանչյուրին կպարգևատրի 50 լարիով:

Իսկ նոր տարվանից հետո կհայտնաբերվեն ամենակատիվ հին սպառողները, եւ նրանցից յուրաքանչյուրը կստանա 100 լարիի դեպոզիտ:

Օգտվեք «Ֆինկա» բանկի դրամական միջազգային փոխանցումների գործառնությունից, ցուցաբերեք ասիվություն եւ ստացեք պարգևներ:

Advertisement for FINCA Bank featuring a hand holding a 100 AMD note and the text: ԻՐԱԿԱՆԱՑՐԵ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՐ

«Ֆինկա» բանկ՝ առանձնակի հոգատարություն սպառողների նկատմամբ: Մանրամասն տեղեկատվությունը տես՝ www.FINCA.ge կայքէջում:

ԳԻՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԱՅՔ ՊՈՄՊԵՈՅԻ ԱՅՅՆ ԸՆԴՈՒՄԵՆՆԵՐԻ ԴՆՆՈՒՄԵՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՀԱՄԱՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նրա խոսքով, հանդիպմանը խոսքը վերաբերել է ռուսական բռնազավթմանը, տարածաշրջանի աշխարհաքաղաքաբանության, Սեւ ծովի անվտանգության, նահանգների կողմից Վրաստանի եվրատլանտյան ձգտումների աջակցության, առևտրի և ներդրումների հարցերին:

- Դուք այս երկրի իսկական բարեկամն եք: Մենք, շնորհակալություն ենք հայտնում անձամբ Ձեզ և ԱՄՆ-ին՝ մեր ռազմավարական գործընկերությանը աջակցելու համար, սա մեր ունեցած ամենակարևոր գործընկերությունն է,- հանդիպման մեկնարկին հայտարարեց Գիորգի Գախարիան: Նա շնորհակալություն հայտնեց ԱՄՆ պետքարտուղարին գլոբալ համավարակի ընթացքում Վրաստան կատարած այցի համար:

- Իհարկե, շնորհակալ ենք Միացյալ Նահանգներին նաև նոր կորոնավիրուսի դեմ պայքարում աջակցելու համար: Ինչպես տեղյակ եք, մենք ունենք շատ արդյունավետ համագործակցություն՝ Լուգարի լաբորատորիայի տեսքով, ինչը հանգուցային կողմ է նոր կորոնավիրուսի դեմ պայքարում: Նախ, ցանկանում են ընդգծել, որ մենք իսկապես գնահատում ենք Միացյալ Նահանգների ժողովրդի և կառավարության շարունակական աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը և ինքնիշխանությանը: Դուք շատ լավ գիտեք, թե որքան կարևոր է այս հարցը մեր երկրի համար, որի տարածքները բռնազավթված են, քանի որ գրավող ուժերը դեռ տեղակայված են մեր հողի վրա: Մենք գիտենք, որ այս ռազմավարական գործընկերությունը, առաջին հերթին, հիմնված է ազատության, ժողովրդավարության և, իհարկե, ընդհանուր աշխարհառազավարական շահերով պայմանավորված արժեքների վրա: Տարածաշրջանի այս շատ փոփոխվող ժամանակաշրջանում մենք գիտակցում ենք, որ խնդիրները պետք է լուծվեն: Մենք լավ հնարավորություն ունենք քննարկելու կարևոր հարցեր, խորացնելու Միացյալ Նահանգների և Վրաստանի համագործակցությունը պաշտպանության և անվտանգության, տնտեսական և ժողովրդավարական համախմբման հարցերում: Ես ուզում եմ հավաստիացնել ձեզ, որ մենք իսկապես զգում ենք, որ եկել է պահը մեր համագործակցության և գործընկերության ամրապնդման, ինչպես նաև այս տարածաշրջանում Միացյալ Նահանգների ուժեղացված ներկայացուցչության: Կրկին բարի գալուստ և շնորհակալություն Վրաստան կատարած այցի համար,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

- Ներկա ու ապագա համագործակցության մասին խոսելով, Մայք Պոմպեոն, մասնավորապես, ընդգծեց. - Պարոն վարչապետ, շատ ուրախ եմ, որ այստեղ եմ: Քննարկվելու են շատ կարևոր հարցեր: Մենք 30 տարի

շարունակ հիանալի ընկերներ ենք եղել: Մենք աջակցում ենք ձեզ ժողովրդավարական հարցերում և միասին աշխատում ենք ձեր երկրի բռնազավթումից բխող ցավի և դժվարությունների հետ կապված հարցերի շուրջ: Այսպես, մենք ամեն ինչ անելու ենք ձեր երկրում ժողովրդավարացման գործընթացին աջակցելու, ազատ և արդար ընտրությունների համար կարևոր ինստիտուտները ամրապնդելու և այն ամենի համար, ինչը բխում է առողջ քննարկումներից և ժողովրդավարությունից: Շնորհակալություն հյուրընկալության համար: Ես գնահատում եմ այս հնարավորությունը և ուրախ եմ հանդիպել Ձեզ,- հավելելով, որ ամբողջ աշխարհը, ներառյալ Վրաստանը, կանգնած է Չինաստանից ներթափանցած վիրուսի մարտահրավերի առջև:

- Մենք միասին կհաղթահարենք, հոգ կտանենք մեր ժողովրդի մասին և կգարագանջենք տնտեսությունը, ինչը շատ կարևոր է ձեր երկրի, տարածաշրջանի և աշխարհի բարեկեցության համար,- ընդգծեց Մայք Պոմպեոն:

Հանդիպման ավարտին՝ ամփոփելով արդյունքները, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ Վրաստանի և ԱՄՆ-ի հարաբերությունները երբեք չեն եղել այսքան դինամիկ և շարունակաբար զարգացող:

- Պետքարտուղարի այցն ավարտված է, չափազանց կարևոր այց, ինչպես նաև կարևոր ժամանակահատված: Հիմնական թեմաները, որոնք քննարկվել են, դա մեր երկրների ռազմավարական գործընկերության խորացումն է, տարածաշրջանային անվտանգության խնդիրներն ու ԱՄՆ-ի և Վրաստանի համագործակցության կարևորությունը տարածաշրջանային գործընթացներում, ինչպես նաև Վրաստանի դերը տարածաշրջանային գործընթացներում,- հայտարարեց վարչապետը:

Ըստ նրա, ամենակարևորն այն է, որ պետքարտուղարը, ամերիկացի ժողովրդի և կառավարության անունից, վերահաստատեց իր անսասան աջակցությունը Վրաստանի ժողովրդին երկրի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության, եվրատլանտյան զարգացման, առևտրատնտեսական հարաբերությունների խորացման տեսանկյունից:

- Ընդգծվել է Վրաստանի համար կայուն զարգացման, ժողովրդավարացման գործընթացի ու ինստիտուտների ամրապնդման կարևորությունը: Ի վերջո, մենք համաձայնեցինք, որ պետք է է՛լ ավելի խորացնենք ռազմավարական գործընկերությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների վրա, ինչպիսիք են ազատությունը, ժողովրդավարությունը և ընդհանուր ռազմավարական շահերը: Սա չափազանց կարևոր այց էր, որի ընթացքում

ընդգծվեց Վրաստանի կարևորությունը ռազմավարական գործընկերոջ համար, Վրաստանի հետագա զարգացման կարևորությունը և եվրատլանտյան կուրսը: Այս ամենը եւս մեկ անգամ հաստատում է երկրի հաջող քաղաքականությունը, կառավարության կողմից իրականացվող եվրոպական և եվրատլանտյան զարգացման տեսանկյունից- հայտարարեց Գախարիան:

Հանդիպմանը ներկա էր նաև Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին:

ԸՆԴՈՒՄԵՆՆԵՐ ԿՐԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿՐՈՆԻ ԱԶՏՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՄԻՑ

Նույն օրը Վրաստանի պատրիարքարանում կայացավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հանդիպումը պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի հետ:



Վրաստանում ԱՄՆ դեսպանության տարածած հաղորդագրության համաձայն, պետքարտուղար Պոմպեոն հաճույքով հանդիպեց նորին սրբություն Վրաստանի Ուղղափառ եկեղեցու Պատրիարք Իլիա Երկրորդին: Հանդիպման ընթացքում պետքարտուղարը և Պատրիարքը քննարկել են Վրաստանի կարևոր դերը աշխարհում կրոնի ազատության աջակցության տեսանկյունից:

Հանդիպմանը Պատրիարքն օրհնել է Մայք Պոմպեոյին, ով «իր կողմից հայտնել է իր ուրախությունը Պատրիարքի հետ հանդիպման կապակցությամբ»:

Այցի ավարտին ԱՄՆ պետքարտուղարը Թբիլիսիի «Շեքատոն Մետեխի պալատում» հանդիպում ունեցավ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը հիմնականում քննարկվել են արդարադատությանը, դատական համակարգին, մարդու իրավունքներին առնչվող հարցեր:

Հանդիպման ավարտից հետո պետական քարտուղարը ուղեւորվեց Թբիլիսիի միջազգային օդանավակայան, որտեղից մեկնեց Իսրայել:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՆՉՈ՞Վ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԻԱԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոտեմբերի 31-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքում, համասանակալ ընտրակարգով 120 մանդատները բաշխվեցին 9 քաղաքական սուբյեկտների միջև:

Նաև նշել էինք, որ Միացյալ ընդդիմության մեջ ընդգրկված և խորհրդարանական ընտրությունների ընտրաշենքը հաղթահարած 8 ընդդիմադիր կուսակցություններ հայտարարել են մանդատներից հրաժարվելու և նոյեմբերի 21-ին մեծամասնական ընտրակարգով ընտրությունների երկրորդ փուլին չմասնակցելու մտադրության մասին: Ընդդիմությունը պահանջում է չեղարկել հոկտեմբերի 31-ի ընտրությունները և անցկացնել նոր ընտրություններ: Ընդդիմության նման դիրքորոշման պայմաններում, բացառված չէ միակուսակցական խորհրդարանի ձեւավորումը: Ինչո՞վ է վտանգավոր միակուսակցական խորհրդարանը: Այդ հարցով դիմեցինք կոնսուլտացիոնալիստ Վախթանգ Խմալաձեին:

- Բատոն Վախթանգ, ինչպես գիտեք, ընդդիմությունը հրաժարվում է խորհրդարանական մանդատներից: Ի՞նչ կատեխիզապա մասին:

- Խորհրդարան չներկայանալը, մանդատներից հրաժարվելը մի բան է, սակայն բացառականապես այլ իրավիճակ կստեղծվի, եթե մանդատները վերցնեն, և խորհրդարանի նիստերին հայտարարեն բոյկոտ, որը օրենքով թույլատրելի է: Սակայն բոյկոտը ուշ թե շուտ կդադարեցվի, և այդ դեպքում խորհրդարանը ողջ

կազմով կլինի բազմակուսակցական, ընդդիմությանը կվերապահվի սահմանադրությամբ և օրենքով շնորհված իրավունքները: Այդ իրավունքներից մեկը նախատեսում է, որ խորհրդարանի ձեւակերպումից անմիջապես հետո՝ հիմնել ժամանակավոր քննչական հանձնաժողով: Նման հանձնաժողովի ստեղծման համար բավական է խորհրդարանի 50 անդամների որոշումը, իսկ դրա համար ընդդիմությունն ավելի քան մեծ հնարավորություն ունի, քանի որ ընդդիմադիր պատգամավորների թիվը նորընտիր խորհրդարանում 50-ից ավելի է:

- Իսկ ի՞նչ կարող է անել նման հանձնաժողովը:

- Քննչական հանձնաժողովի իրավասությունները բավական լայն են, նրա միջոցով կարելի է վերահաշվարկել ընտրությունների արդյունքները, բացել բոլոր ընտրատեղամասերում կնքված նյութերը, նորից հաշվել տրված ձայները: Եթե պարզվի, որ ընտրությունների արդյունքներով առաջին տեղում հայտնված «երազանքը» յուրացրել է իրեն չպատկանող մանդատները, ապա, դա կհանգեցնի բողոքների և բացառված չէ, որ կառավարող կուսակցությունը ստիպված լինի հայտարարել արտահերթ ընտրություններ:

- Իսկ եթե ընդդիմությունը հրաժարվի մանդատներից, ապա...

- Այդ դեպքում խորհրդարանում մենք կունենանք միակուսակցական մեծամասնություն, ոչ ոք չի բողոքարկի կամ ընդդիմախոսի նման խորհրդարանի կողմից ընդունվող որոշումները, իսկ դա վտանգավոր է: Նման դեպքերում խորհրդարանում ևս մեկնում է, ինչ ցանկանում է և անտեսում տարբերակվող կարծիքը:

- Հետևաբար, ստացվում է, որ կունենանք բնակչության կեսից պակասի աջակցությունը վայելող խորհրդարան:

- Այո: Եթե հավատանք այսօրվա տյալներին, ապա կունենանք խորհրդարան, որն արժանացել է բնակչության կեսից պակասի 48 տոկոսի աջակցությանը: Դժվար է կանխատեսել, թե ինչպես կզարգանան իրադարձությունները, թեպետ հնարավոր սցենարները դրական ոչինչ չեն նախատեսում: Կասկածելի է, որ նման խորհրդարանը կարողանա գոյատևել չորս տարի:

- Բայց չէ՞ որ սահմանադրական փոփոխությունների իրականացումն ուղղված էր նաև հնարավոր ճգնաժամների հաղթահարմանը:

- Իրոք, դա այդպես էր, երբ խոսում էինք մյուս ընտրահամակարգերի համեմատությամբ, մեր խորհրդարանական ընտրահամակարգի առավելությունների մասին, որպես նշանակալի փաստարկ, ընդգծվում էր այն, որ տվյալ մոդելը նախատեսում էր

հնարավոր ճգնաժամներից դուրս գալու դյուրին ճանապարհներ, որոնցից մեկը արտահերթ ընտրությունների անցկացումն է: Որպեսզի իրավիճակը չդառնա անկառավարելի և իշխանությունը չփոխվի ոչ սահմանադրական ուղիով, օգտագործվում է, այսպես կոչված, «գոլորշու բացթողման» մեխանիզմը և նշանակվում է արտահերթ ընտրություններ: Նման ուղիով հնարավոր է փոխել քաղաքական իրավիճակը, ձեւավորել նոր խորհրդարան, իսկ երկիրը կունենա զարգացման նոր մալ հնարավորություն: Հենց սա է խորհրդարանական հանրապետության առավելությունը, միայն թե դրանից պետք է կարողանալ օգտվել, իսկ օգտվելու համար անհրաժեշտ է գիտակցական վերլուծություն, և անհրաժեշտ որոշումն ընդունելու ունակություն, որը, ցավոք, միշտ չէ, որ իրականացվում է:

- Նման պայմաններում, ի՞նչ խորհուրդ կտայիք «երազանքին»:

- Խորհուրդս այն է, որ իրականացնեն վերահաշվարկ և, եթե բացահայտվեն այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդեցություն գործել արդյունքների վրա, թեկուզե 3-4 մանդատի բաշխման վրա, նշանակել արտահերթ ընտրություններ: Այդ դեպքում, ընդդիմությունը կմտնի խորհրդարան և երկրում քաղաքական ճգնաժամի սպառնալիքի զարգացման հնարավորությունը կնվազեր: